

## Հ Յ Տ Ա Կ Յ Ց Ո Ւ Թ Ի Ւ Յ


Քամայի յիշատակին

Վիշտը այնպէս խորունկ կը զգամ ես այս գիշեր,  
Եւ ինձզինքս անոր դիմաց այնպէս աննար ...  
Ցաւիդ դիմաց հոգիս ահա ծունկի իշեր,  
Կը հեծեծէ ենզի համար:

Որբ ես մեծցեր, քսին ինձի, զիտեմ, կը զգամ ...  
Ու իմա ալ որբեւայրի պիտի մընաս.  
Արհամարհէ կեանքն ու աշխարհ ու ամէն բան  
Քոյր իմ, ուշպէսզի դիմանաս:

Կ'ուզեմ սակայն չըկորսընցնես դուն եռ կորովդ,  
Ցիշատակն իր ենզի ըլլայ բող հաջալեր.  
Եր զաւակին ալ սեւեռէ սէրդ ու գորովդ  
Եւ նորոգէ հոգւոյդ աւերն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



### ՀԱՅՐԵՆՅԱԿԱՆՔ

### ԼՈՅՍԵՐԸ

Թող վառուին լոյսերը մեր բոլոր,  
Թող լոյսով ողողուի ամէնուր՝  
Եւ ճամբայ Եւ պուրակ Եւ փողոց,  
Թող վառուին լոյսերը մեր բոլոր:

Զենք մոռցած տարիներն ահաւոր,  
Դիշերները զաժան ու մթին,  
Երբ լոյսի էր կարօտ մեր հոգին,  
Թող վառուին լոյսերը մեր բոլոր:

Թող վառուին, թող վառուին ամէն օր,  
Թող ծփան ծփաղին ամէնքին,  
Ետ խուած կեանքի պէս թանկագին,  
Թող վառուին լոյսերը մեր բոլոր:

ՎԱՀԱՆ ԳՐԻԳՈՐԻԱՆ